ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

2023թ. հուլիսի 10-ին, N 269-Ա ք.Աշտարակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ «ՍԱՍՈՒՆԻԿԻ Գ. ՉԱՈՒՇԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ԱՆԱՀԻՏ ԻՍՐԱՅԵԼՅԱՆԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԵՐԿԱՐԱՑՎԱԾ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 158-րդ, 160-րդ հոդվածներով, 164-րդ հոդվածի 2-րդ մասով, «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, 13-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1599-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 1-ին կետը և Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի «Սասունիկի Գ. Չաուշի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Անահիտ Իսրայելյանի 2023 թվականի հուլիսի 10-ի դիմումը. ***որոշում եմ՝***

1. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի «Սասունիկի Գ. Չաուշի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Անահիտ Իսրայելյանին տրամադրել ամենամյա երկարացված արձակուրդ 2022-2023 թվականների ուսումնական տարվա համար 25 աշխատանքային օր տևողությամբ՝ 2023 թվականի հուլիսի 17-ից օգոստոսի 18-ը ներառյալ:
2. Անահիտ Իսրայելյանի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում «Սասունիկի Գ. Չաուշի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունների կատարումը ժամանակավորապես դնել «Սասունիկի Գ. Չաուշի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային

կազմակերպության մասնագիտացված կրթական աջակցությունների գծով տնօրենի տեղակալ Ծովինար Մանուկյանի վրա:

3. Անահիտ Իսրայելյանին աշխատանքի մեջ համարել 2023 թվականի օգոստոսի 21-ից:

Восстановимая подпись

X

VERIFIED OCSP 7/11/2023 15:58:40 GMT+4

Подписано: MOVSISYAN SERGEY 2309890457

Ս.ՄՈՎՍԻՍՅԱՆ